

Ընդհանուր ցուցումներ

Նախագծվող մանկապարտեզի "Ն" փուլի տվյալ բաժնում մշակված են սկզբունքային լուծումներ ջեռուցման և օդափոխության համակարգերի համար:

Նախագիծը կատարված է համաձայն.

ա) պատվիրատուի առաջադրանքի

բ) ճարտարապետա- շինարարական գծագրերի

գ) գործող շինարարական նորմերի և կանոնների հիման վրա

ՇՆՀՀ IV-12.02.01-00 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

СНиП "Отопление, вентиляция и кондиционирования".

ՇՆՁ II-7.102-98 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

ГОСТ 30494-96 "Здания жилые и общественные. Параметры микроклимата в помещениях.

МГСН 4-16.96 "Общеобразовательные учреждения"

СНиП 2.08.02-89 "Общественные здания"

Արտաքին օդի ծմեռային հաշվարկային ջերմաստիճանը $t_{\text{արտ.}} = -19^{\circ}\text{C}$ է ջեռուցման համակարգի

նախագծման համար (պարամետր "Ե"), արտաքին օդի միջին ջերմաստիճանը ոչ ավել 10°C ժամանակաշրջանի

համար $t_{\text{սիջ.}} = 1.8^{\circ}\text{C}$ և ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը 159օր է:

Սենքերի ներքին ջերմաստիճանները ընդունված են համաձայն վերը նշված շինարարական նորմերի:

Նախագծվող շենքի ջերմամատակարարումը նախատեսված է սեփական նախագծվող կաթսայատնից:

Ջեռուցում

Ջեռուցման համակարգի հաշվարկի համար ընդունված են հետևյալ նշանակումները.

Ջեռուցման ժամանակաշրջանի Dc- ջերմաստիճան-օրը, որը անհրաժեշտ է որոշել հետևյալ բանաձևով

$$Dc=(t_{\sigma}-t_{\Sigma,2})\times Z_{\Sigma,2}, \text{ որտեղ `}$$

t_{σ} - ներսի օդի նորմայավորված ջերմաստիճանն է

$t_{\Sigma,2}$, $Z_{\Sigma,2}$ - ջեռուցման շրջանի դրսի օդի միջին ջերմաստիճանն է և ջեռուցման ժամանակա- շրջանի տևողությունը:

Մանկապարտեզի համար $D_c=(22-1.8)\times 159=3211.8$

Ելնելով վերը նշված հաշվարկային նշանակություններից ընտրված են պատող կոնստրուկցիաների

ջերմփոխանցման գործակիցներ (նայիր ՇՆՁ II-7.102-98).

Պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման դիմադրություն

| Շենքի անվանումը | Պատող կոնստրուկցիաների ջերմփոխանցման դիմադրության արժեքները R _o (մ² օC) Վտ | | | | |
|-----------------|---|--|---------------------------------------|----------------------------------|-------------------|
| | Պատեր | Վերնածածկեր և դրսի օդից մեկուսացնող ծածկեր | Սառը նկուղների և ներքնահարկերի ծածկեր | Լուսամուտներ, պատշգամբային դռներ | Ապակեպատ երդիկներ |
| Մանկապարտեզ | 2.4 | 4.0 | — | 0.4 | — |

Ջեռուցման համակարգը հաշվարկված է ըստ սենյակների նշանակումների, ջերմային կորուստների քանակի և տեխնոլոգիական լուծումների:

Մանկապարտեզի ջեռուցման համակարգը նախատեսված է ջրային, ներքին մատակարարումով,

ջերմատարի փակուղային շարժումով :

Ջերմամատակարարումը իրականացվում է շենքում նախագծված կառավարման հանգույցում, որը համալրված է

2(տուրբո ծխատարով) պատի ջեռուցման կաթսաներով N=30660+32230=62890x1,11=69808վտ:

Ընտրված է 2-կաթսա N=35,0կՎտ: Ջեռուցման ջերմատարի ջերմաստիճանն է 80-60 ⁰C:

Սենքերի ներքին ջերմաստիճանները ընդունված են ըստ համապատասխան գործող նորմերի և պատվիրատուի առաջադրանքի:

Մագիստրալ խողովակագծերը անցնում են հարկի հատակի վրայով:

Շենքի ջեռուցման համակարգի համար ընդունված են պոլիպրոպիլենային խողովակներ.

խողովակների անցումը պատերի և ծածկերի մեջ նախատեսված է էլաստիկ պատյանների մեջ,

որը ապահովում է խողովակների ազատ տեղափոխումը և չի առաջացնում գաջի շերտի ճաքճքում:

Պատվիրատուի առաջադրանքի համաձայն որպես ջեռուցման սարքեր ընդունված են պողպատյա պանելային

կոնվեկտորներ: Ջեռուցման սարքերի ջերմատվության կարգավորման համար բոլոր սարքերի վրա նախատեսված է

տեղադրել ջերմային կարգավորիչներ, իսկ օդի հեռացման համար օդային փականներ:

Մագիստրալ խողովակների վրա նախատեսված են փակող, կարգավորիչ և դատարկման փականներ:

Ջեռուցման համակարգից օդի հեռացման համար, համակարգի բարձր կետերում նախատեսված են ավտոմատ

օդահեռացուցիչներ:

Կառավարման հանգույցի և ե/բետոնե ակոսներում անցնող մագիստրալ խողովակները ընտրված են

մեկուսացումով :

Օդափոխություն

Օպտիմալ սանիտարա-հիգիենիկ պայմաններ ստեղծելու համար մանկապարտեզում նախատեսված են

արտածման համակարգեր բնական և մեխանիկական դրդմամբ :

Համակարգերի բաժանումը կատարվել է ըստ սենյակների նշանակության, ըստ օդափոխության բազմապատիկների:

Ինքնուրույն արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ նախատեսված են սան. հանգույցների համար,

խոհանոցի համար:




Օդի քանակը կարգավորելու համար արտածման օդատարների վրա նախատեսված են դրոսել-փականներ:

Օդափոխության համակարգերի օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց պատի

հաստությունը, կախված է կտրվածքից, ընտրված է ըստ СНиП 41.01-2003:

"Ջ0" Մակնիշի աշխատանքային գծագրերի հիմնակա ցուցանիշները

| Շենքի անվանումը | Ծավալը մ³ | Արտաքին ջերմաստ. արտ. | Ջերմության ծախսը, Վտ | | | | Սառեցման ծախսը, Վտ | Ծանոթություն |
|---------------------------|-----------|-----------------------|----------------------|--------------|---------------------|-----------|--------------------|--------------|
| | | | Ջեռուցման | Օդափոխության | Տաք ջրամատակարարման | Ընդհանուր | | |
| Մանկապարտեզի առաջին հարկ | | -19°C | 30660 | --- | --- | 30660 | --- | |
| Մանկապարտեզի երկրորդ հարկ | | -23°C | 32230 | --- | --- | 32230 | --- | |

| | | | | | | | | |
|------------|---------------|---|---|--|--|--|------------|------|
| ՍՊԸ տնօրեն | Մ. Միսակյան |  | TAT-06 Արարատի մարզի Արարատ գյուղի մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցման նախագիծ | | | | | |
| ՆԱԽԱԳԾԵԳ | Ա. Ջանունց |  | Ջեռուցում և օդափոխություն | | | | Փուլ | Թերթ |
| | Հ. Աբրահամյան |  | | | | | Ա.Ն. | ՋՕ-1 |
| | | | Ընդհանուր տվյալներ (սկիզբ) | | | | «ԱՄԱԳ» ՍՊԸ | |
| | | | | | | | | |